

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԸ ՊԻՏԻ ՔՆՆՈՒԻ

Խ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԻՍՏԻՆ

Լեռնային Ղարաբաղի հարցը, որ Հայաստանի ու ԼՂԻՄ-ի երեսփոխաններու եւ նախագահ Մ. Կորպաչովի միջեւ կայացած հանդիպման մը ընթացքին խոստացուած էր կրկին քննութեան դնել Խ. Միութեան ժողովրդական երեսփոխաններու Բ. համարումարէն անմիջապէս յետոյ, առանձին նիստի մը ընթացքին, նոյն՝ Խ. Հայաստանի եւ ԼՂԻՄ-ի ժողովրդական երեսփոխաններու առաջարկով եւ նախագահ Մ. Կորպաչովի համաձայնութեամբ որոշուած է օրակարգի նիւթ դարձնել Գերագոյն Խորհուրդի յառաջիկայ նստաշրջանին, որ պիտի սկսի ընթացիկ ամսուան աւարտին:

Այս մասին խօսելով Արմենփրէսի Մոսկուայի թղթակից Ջ. Բալակէօղեանին, ԼՂԻՄ-ը ներկայացնող երեսփոխաններէն Ջ. Բալայեան իր գոհունակութիւնը յայտնած է առնուած որոշումին առթիւ եւ հաղորդած նաեւ, թէ Գերագոյն Խորհուրդը գրեթէ նոյնութեամբ որդեգրած է այն հռչակագիրը, զոր հայ երեսփոխանները յղած են նոյն մարմնին: Ընդունուած այդ բանաձեւին մէջ, նշած է Բալայեան, առաջին անգամ ըլլալով Ատրպէյճանի կողմէ Արցախի եւ Խ. Հայաստանի դէմ շղթայազերծուած տնտեսական սլաշարումը կը բնութագրէ իր բուն անունով՝ «չըջափակում»: